Արձանագրություն թիվ 1
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Շիրակի մարզային հանձնաժողովի 2017 թվականի
փետրվարի 21-ի նիստի

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Նիստին մասնակցում էին՝

Հ. Հովհաննիսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
Ա. Մարգարյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
Ա.Ադամյան - Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն, հանձնաժողովի անդամ.
Ա.Նիկողոսյան - Հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրու մասնաճյուղի ծրագրերի ղեկավար, հանձնաժողովի անդամ.
Ռ. Ռաշոյան - Գյումրու «Հաշմանդամների ասոցիացիա» ՀԿ նախագահ, հանձնաժողովի անդամ.
Ա. Գյունաշյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:

Նիստին մասնակցում էին հրավիրվածներ՝
Գ.Տարասյան - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ գործադիր տնօրեն.
Ա.Դիլանյան - «Հաշմանդամների մարզամշակութային կենտրոն» ՀԿ նախագահ.
Ս.Գրիգորյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ.
Լ. Գորգինյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ.

Օրակարգ – ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի կողմից Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը, նրանց իրավունքների ապահովմանն ու սոցիալական ներառմանն ուղղված 2016 թվականի տարեկան ծրագրի իրականացված աշխատանքների վերաբերյալ:

/Հաղորդում՝ Հ. Արշակյան - Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային հանձնաժողովի նախագահ/:

Լսեցին - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ա և ՍԱ վարչության

սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար Ա. Գյունաշյանի հաղորդումը « ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի կողմից Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը, նրանց իրավունքների ապահովմանն ու սոցիալական ներառմանն ուղղված 2016 թվականի տարեկան ծրագրի իրականացված աշխատանքների վերաբերյալ»:

Ելույթ ունեցան՝ Լ. Գորգինյանը, Ս.Գրիգորյանը, Ռ.Ռաշոյանը :

Նիստում քննարկումներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:
Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նախագահ Հ.Արշակյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Համագործակցել հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների հետ:
3. Օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց կրթական և մասնագիտական ուսուցման ծրագրերում:
4. Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող բժշկական օգնության ծրագրերի իրականացման, ինչպես նաև վերականգնողական, տեխնիկական և օժանդակ այլ պարագաներով ապահովման աշխատանքներում:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գյունաշյան